



Այսօր, 2010թ. դեկտեմբերի 14-ին «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում բացվեցին ամրոցի տարածքում տեղադրված հնգալեզու տեղեկատվական վահանակներ, ինչպես նաև թանգարանի մշտական ցուցադրությունը այցելուների առջև բացեց փաստավավերագրական նորացված նյութերով ու մեկնաբանման նոր հնարքներով հագեցած ցուցափեղկերով:

Բացման խոսքով հանդես եկավ արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանը՝ հանրության հետ արգելոց-թանգարանի հաղորդակցությունը անբաժանելի համարելով պահպանության գործընթացից:

Միջոցառման մասնակիցներին և այցելուներին ողջունեցին «Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր» հասարակական կազմակերպության նախագահ Ռիչարդ Նայր, «VIVACELL MTS» -ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, Գյումրիում Իտալիայի պատվո հյուպատոս Անտոնիո Մոնտալտոն, Երևանի քաղաքապետարանի Մշակույթի և տուրիզմի վարչության պետ Էլեոնորա Թումանյանը: Հյուրերին ներկայացվեցին մշտական ցուցադրության բարենպաստ ընկալման նպատակով արված աշխատանքները, ինչպես նաև կազմակերպվեց շրջայց ամրոցի միջնաբերդով:



Արգելոց-թանգարանի և ԱՄԱՓ-ի գործակցության արդյունքում իրականացված ծրագրի շնորհիվ հնավայրի տարածքում ազատ շրջայց նախընտրողներն այսուհետ հնարավորություն կունենան տեղաշարժվելու ուղեցույց նշանների օգնությամբ և առանց էքսկուրսավարի միջնորդության ընկալել հուշարձանն ու վայրի նշանակությունը: Ծրագրի գլխավոր հովանավորը VIVACELL MTS է: